Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ԻՍԱՀԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ

# ԿԻՆ ՎԻՊԱԳԻՐ

# Ե. ՍՓԻՐԻ

(Արտատպած «Լումայ» հանդէսից)

ԹԻՖԼԻՍ
Տպարան Տ. Ռօտինեանցի
1901

83-09
Հ-42

## ԻՍԱՀԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑԻ

*աշխատութիւնները*

1. Հայոց գիրը, պսակուած Սահակ-Մեսրոպեան մրցանակով. գինն է 1 ր. 50 կ.
2. Համառօտ տրամաբանութիւն. գինն է 1 ր.
3. Գերմանիայի մանկավարժական բարձրագոյն հաստատութիւնների գործունէութ. և հայ ուսանողները. գինն է 40 կ.
4. Ներսիսեան դպրանոցի սաների առաջին դպրոցական ճանապարհորդութիւնը. յաւելուածով. գինն է 40 կ.
5. Ներսիսեան դպրանոցի սաների երկրորդ դպրոցական ճանապարհորդութիւնը. գինն է 20 կ.
6. Ստեփաննոս Պալասանեան. գինն է 25 կ.
7. Աշակերտի յուշատետրը. գինն է 30 կ.
8. Զգայմունքների աշխարհ (Վէրք Հայաստանի). գ. է 30 կ.
9. Սանահին. գինն է 30 կ.
10. Իմ օրագիրը. գինն է 25 կ.
11. Ծաղկոց (մանկական պարտէզ). գինն է 10 կ.
12. Ե. Սպիրի. Կին վիպագիր. գինն է 15 կ.

*Տպագրութեան համար պատրաստ է*

12. Համառօտ հոգեբանութիւն.

*Թարգմանութիւններ*

1. Պեստալոցցի Լինհարդ և Գերտրուդ. վէպ գինն է 1 ր 50 կ.
2. Հուքսլէյ (Գէքսլի) Տարերք բնական գիտութեանց. գինն է 40 կ.
3. Դր. Նաուման. Երգրում. գինն է 15 կ.
4. Ե. Սպիրի. Վարդ Բեալին. գինն է 10 կ.
5. » Ուսենց Յովսէփ. գինն է 15 կ.
6. » Այծարած Մօնի. գինն է 15 կ.
7. » Ալպեան հովիւ. գինն է 20 կ.
8. » Հայրենադուրկ. գինն է 50 կ.
9. Եօկայի. Ուրացողը. գինն է 20 կ

*Մամուլի տակն է.*

10. Պրոֆ. Ռատցել. Տարերք ազգագրութեան։

Աշխատութիւններիս գնողները ճանապարհածախս չեն վճարում։

Հասցէն՝ Армянская Семинарія Нерсисянъ. Исааку Арутюнянцъ կամ, Бебутовская (Садовая) № 38.

83.09
Հ-42
10 NOV 2011
03 AUG 2005

ԻՍԱՀԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ

# ԿԻՆ ՎԻՊԱԳԻՐ

# Ե. ՍՊԻՐԻ

(Արտատպած «Լումայի» հանդէսից)

1005
21636
ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴ.
7/XI-1922
Ա. ՄՅԱՍ ԻՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Տ. Ռոտինեանցի
1901

10 JUN 2013

Дозволено цензурою, Тифлисъ, 2-го Октября 1901 г.

ԲԱՐՁՐ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՒ

Տ. ԳԻՒՏ ՍԻՍԱԳ ՔԱՀԱՆԱՅ

ԱՂԱՆԵԱՆՑԻՆ

ՄՐՏԱՔՈՒՂԻՆ ՆՈՒԷՐ

*(Նորա գրական գործունէութեան քսանուհինգամեակի առիթով)*

ՀԵՂԻՆԱԿԻՑ

## Ե. ՍՊԻՐԻ

### ԿԻՆ ՎԻՊԱԳԻՐ

---

Բոլոր գերմանախօս և ֆրանսախօս ազգերի մանուկների ու պատանիների ամենասիրելի վիպագիրն է Յօհաննա Սպիրին։

Կին գրող և մանուկ ընթերցող— որքան բնական կապակցութիւն և հոգեբանական արտայայտութիւն կայ այդ երկու գաղափարների մէջ. ով աւելի լաւ կարող է ճանաչել փոքրիկ մանկան ու պատանու զգացմունքները, նրա անմեղ սրտի ուրախութիւններն ու վշտերը՝ քան կինը։ Ո՞վ աւելի մեծ հոգեբանական ճշտութեամբ կարող է գիտել, տեսնել և ուսումնասիրել երեխայի, պատանու ձգտումները, ցանկութիւններն ու գործերը՝ քան կինը. ով աւելի մեծ հմտութեամբ կարող է նկարագրել մանկական սրտի քնքոյշ զգացմունքները՝ քան կինը։ Չէ որ նոյն իսկ բնութեան օրէնքներով կինն է մանկան առաջին, ամենամօտ և ամենասիրելի էակը,

նրա մարմնին ու մտքին առաջին անգամ սնունդ հայթայթողը, նրան սիրողը, նրա հետ ուրախացողն ու վշտացողը։

Նոյն իսկ չամուսնացած կինը մի տեսակ մայրական զգացմունքով է վերաբերւում դէպի մանուկը. մանուկներն ու պատանիներն էլ կարծես բնազդմամբ աւելի մատչելի են կանանց՝ քան թէ տղամարդկանց. այդ շատ բնական է և սէրը փոխադարձ։

Ահա այդ փոխադարձ սիրոյ կատարեալ մարմնացումն է Սպիրիի գրչին ոյժ տւողը, նրան սիրելի դարձնողը և մայրերից ու մանուկներից հաւասարապէս յարգանք վայելելու բաղդի հիմնաքարը։ Ի՛նչ տեսակ մանկական ու պատանեկական զգացմունք ու ցանկութիւն ասես, որ նկարագրած չլինի Սպիրին իւր գրուածքների մէջ. որդիական սէր դէպի ծնողները, պատկառանք ու յարգանք դէպի հասակաւորները, երկիւղածութիւն, ձգտումն Աստուծոյ պատուիրանները կատարելու, ընկերական սէր, ուրախակցութիւն, վշտակցութիւն, աշխատասիրութիւն, չքաւորին օգնել, հիւանդին այցելել, բերանի պատառն ուրիշին տալ, ձգտումն դէպի ուսումն ու արհեստները և այլն և այլն։

Սպիրիի գրուածքները մանկավարժական կամ դիդակտիկական տենդենցիաներ չունին. ընդհակառակը դրանց մէջ պարզ նկարագրուած է մեծերի ու փոքրերի իմաստութիւնը, խելօքութիւնը և նոյնպէս յիմարութիւնները. մանկական հոգու խելօք արարքներն ու չարութիւնները ճշտութեամբ են արտացոլւում։ Սպիրին չէ քարոզում՝ թէ ինչպէս պէտք է լինեն մանուկները և թէ ինչպէս չպէտքէ լինեն, այլ նկարագրում է նրանց այնպէս, ինչպէս որ նրանք կան։ Այդ գրուածքներում միշտ ծերերը չեն, որ խրատում և ուսուցանում են պատանիներին, այլև երբեմն էլ պատանիներն են



ցոյց տալիս ճշմարտութիւնը՝ հասակաւորներին. իսկ մեծ մասամբ մանուկներն իրենց կամքին են թողնուած և նրանք փորձում ու գործում են ինքնուրոյն կերպով։ Բայց հեղինակն այնպիսի պայծառ գոյներով է նկարագրում նրանց մանկական ու պատանեկական արարքները, որ ընթերցողը միշտ զուարճութեամբ է կարդում։

Սակայն միայն զուարճութիւն չէ զգում Սպիրիի պատմութիւնները կարդացողը. նա երբեմն էլ արտասւում է։

Ծիծաղ և լաց. ահա այս երկու հոգեկան արտայայտութեանց հմուտ կապակցութիւնն է Սպիրիի բանաստեղծական շնորհքն ու արուեստը։ Առանց չափազանցութեան կարելի է ասել, որ Սպիրիի փոքրիկ պատմութիւններն իրենց բնականութեամբ, պարզութեամբ և ճշտութեամբ անզուգական են մանկական գրականութեան մէջ։ Նրա նկարագրութիւններն ազատ են անմիտ ֆրազներից։ Ուրախ և տխուր հնչիւններ են լսւում այդ պատմութիւններից. մանուկների բազմաթիւ խմբեր գրաւիչ զանազանակերպութեամբ դուրս են թռչում դէպի գործողութեանց վայրերը. դրանք բոլորը միմիայն բարոյական, հնազանդ և լուռումունջ երեխաներ չեն, այլ կան նաև վայրենի, անպիտան և ծոյլ մանուկներ։ Դրանց մէջ չենք գտնում այն իդէալացրած ամենալաւ կամ ամենավատ տիպերը, որոնք սովորական մանկական գրուածքների հերոսներն են լինում. արհեստական կերպով բարոյականացնելը Սպիրիի գրչի յատկանիշը չէ. Հայրիկները, մայրիկներն ու մօրաքոյրերը միմիայն նրա համար չեն, որ խրատներ ու քարոզներ կարդան և ուժով «բարոյականացնեն» և մանկավարժական դասեր տան։ Նրանք ապրում են փոքրիկների հետ և իրենց հոգսերը, վշտերն և ուրախութիւն-

ներն ունին, կարևոր դէպքում օգնում են փոքրիկներին, բայց չեն խանգարում նրանց ինքնուրոյնութիւնը։ Նկարագրական ձևի մէջ իշխում է իսկական իրականութիւնը, որ խճողուած է հումորով և չարաճճիութեամբ։

Երբ մարդ թերթում է Սպիրիի բազմաթիւ գրուածքները, յաճախ պատահում է եկեղեցական երգերի և աղօթքների. սակայն հեղինակն այնպէս յարմար ու տեղին է կապակցում պատմած դէպքերի կամ իրողութեան հետ, որ ընթերցողը հիանում է։ Սակայն միթէ անբնական ու վնասակար չէր լինի, եթէ Սպիրին տգէտ ու աղքատ ժողովրդին զրկէր իւր աղօթագիրքը կարդալուց և այնպէս նկարագրէր, որ իբրև թէ կարիք չկայ այդպիսի դիմումների։ Դաւանանքի մասին չէ խօսում նա. Նրա պատմութիւնների մէջ արտայայտուած կրօնական զգացմունքներն այն տեսակիցն են, որոնք ոգևորում և վեհ զգացմունքներ են ներշնչում ամեն դաւանանքի ու կրօնի պատկանողներին։ Անցողականն ու կարճատևը՝ մշտականի ու յաւիտենականի համար, իսկ մասնաւորն ու տնհատականը՝ ընդհանուր մարդկութեան համար— ահա Սպիրիի փիլիսոփայութեան էութիւնը։

Նրա ո՛չ մի գրուածքում չենք պատահում նեղսիրտ ու կրօնամոլ մտքերի արտայայտութեանց. այն խրատը, որ տալիս է հարուստ տատը մի փոքրիկ երեխայի՝ թէ նա ե՞րբ և ի՞նչպէս պէտք է Աստուծուն աղօթէ և այն դէպքի նկարագիրը, երբ այդ երեխան իւր առաջին աղօթքով նպատակին չհասնելով՝ «Աստուծուց փախուստ է տալիս» – կարելի է կլասիկական անուանել։ Երբ յոգնած, ծեր ու աղքատ կինն իւր աղօթագրքից մի երկու աղօթք է կարդացնել տալիս իւր փոքրիկ թոռանը՝ կարծես թէ ընթերցողն էլ երկիւղած է դառնում, որովհետև պառաւն այդ անել է տալիս իւր ներքին, հոգեկան պահանջի համեմատ և բնական ուժով.



ոչ արուեստականութիւն կայ այդտեղ և ոչ դիտաւորութիւն։ Սպիրիի ամենատարածուած պատմութիւններից մէկի, «Հայդիի» ծեր «Ալմ-Օհէին» իւր դառնացած սրտին բարեբար ազդեցութիւն գործող մտքերից յետոյ՝ գիշերային միայնութեան և լռութեան մէջ խրճթի առաջը մի կարճ աղօթքով յայտնում է. «Հայր, ես մեղանչեցի Քո և երկնքի առաջ և այլ ևս արժանի չեմ Քո որդին կոչուելու» և հետևեալ օրը սարից իջնելով երբ գալիս է գիւղի քահանայի մօտ, վերջինս ընդունում է նրան ասելով. «դրացի, դու ինձ մօտ — գիւղի եկեղեցին — գալուց առաջ՝ իսկական եկեղեցումն ես եղել»։ «Ռուէնց Յովսէփ» պատմութեան մէջ հայր Կլէմէնսին ասում են. «Սեպին այնտեղ խիստ պատիժ կտան, որովհետև ուրիշ հաւատ ունի», նա պատասխանում է. «ո՛չ, ո՛չ, այդպէս չպէտք է մտածէք. այդպէս չէ։ Պարոն աւագ դատաւորն անարդար մարդ չէ, իսկ ինչ վերաբերում է հաւատին, նա լաւ կարծիք ունի, ես ինքս նրանից շատ անգամ լսել եմ թէ. «առուակի թէ այս կողմը և թէ միւս կողմը գտնուող երկիւղած ու Աստծուց վախեցող մարդը միևնոյն երկնային Աստծուն է աղօթում և մէկի աղօթքն Աստծուն նոյնչափ սիրելի է, որչափ միւսինը» [1])։

Սպիրիի մի քանի պատմութիւնների մէջ թէև կրկնութիւնների ենք հանդիպում, սակայն անհատական տարբերութիւնները միշտ գերակշռող են հանդիսանում. Օրինակ «Հայդին» և «Մանիկը» (Հայրենազուրկ) մասամբ միևնոյն նպատակներն ունին, բայց խնդրի լուծումը տարբեր կերպով է տեղի ունենում. «Րիկօն», «Էրիկը» և «Պէպինօն» - երեքն էլ 10 տարեկան են. արտաքուստ էլ այնքան նման են միմեանց, որ պատկե-

[1]) Տես. Ն. Սպիրի. Ռուէնց Յովսէփ, գերմ. թարգ. Խս. Ցարութիւնեանց, 1891 թ. էջ. 54—55։

րազարդ հրատարակութեանց մէջ երեքն էլ միատեսակ զգեստով են նկարուած. մէկն ականատես է լինում հօր մահուան, միւսը մօր. երեքն էլ անտէր մնալով՝ օտարի հաշուով են ապրում և նրանց յարգանքը վայելում։ Բայց որչափ տարբեր է նրանց գործողութեանց եղանակը։

Սպիրին մեծ տաղանդով ու արուեստով է նկարագրում աղջիկների անհատականութիւնը. դրանք համարեա՛ թէ բոլորն էլ 10—12 տարեկան են՝ գործողութիւնների ժամանակ։ «Մանիկը», գիւղական խրճիթի ծնունդը, հազիւ 10 տարեկան է, բայց ինչպէս մօր անդրանիկ աղջիկ՝ ամեն բանում պէտք է օգնէ նրան։ Ամեն կողմից շարունակ նրա անունն են տալիս և նա այդ միջոցին այնպէս աշխոյժ է, որ գործն ինքն իրեն է շինւում նրա ձեռքին. «Մանիկն արդէն փոքրերին երեք զոյգ գուլպայ և երկու զոյգ կօշիկ էր հագցրած լինում և կապում, մինչև որ Տրուդին հագցնելու համար կարողանում էր ուղղել մէկի ոտքը։ Եւ երբ երեխաները սենեակից, իսկ մայրը խոհանոցից միաժամանակ Մանիկ էին կանչում, հայրն էլ ախոռից էր նրան ձայն տալիս, որ գնայ նրա գլխարկը գտնէ կամ թէ մտրակի կապ ընկածները յետ անէ... Այսպիսով թէև Մանիկը շարունակ դէս ու դէն էր վազում և աշխատում, սակայն միևնոյն ժամանակ ուրախ և աշխոյժ էր [1]։

Սպիրին շարունակ մանուկների նոր խմբեր է առաջ բերում և ամեն մէկին որոշ զբաղմունք տալիս. վերին աստիճանի հմտալից է այդ բազմատեսակ նկարագրութիւնը. այդ խմբերից մէկն ամառուայ ճաշից յետոյ ները «աւազակներ և ոստիկաններ» է խաղում, միւսը

[1]) Տես. Ն. Սպիրի. Հայրենազուրկ. գերմ. թարգ. Խ. Յարութիւնեանց. 1896 թ. էջ. 12—13.



ձմեռուայ գիշերները հանելուկներ է ասում և խնդիրներ վճռում, երրորդը լուացարանում արհեստական լիճ է շինում, վրան նաւակներ խաղացնում. բայց բնական է. մարդու սիրտն ուրախանում է այդ նկարագրութիւնը կարդալիս։

Մանկական պատմութիւններ գրողներից շատ քչերին է յաջողուել Սպիրիի նման ճանաչել և հմտութեամբ նկարագրել մանկական ոգին, մանկան համակրելի, սիրելի և նոյնպէս վատ դաստիարակութեան շնորհիւ ստացած վատ ու անհամակրելի կողմերն ու յատկութիւնները։ Նա իր պատմութիւնները գրում է մանուկների համար, մանուկներն էլ մեծ սիրով և զուարճութեամբ են կարդում. բայց մենք, հասակաւորներս էլ, մեծ հետաքրքրութեամբ ենք կարդում. այնպիսի հոգեբանական ճշտութեամբ է Սպիրին նկարագրում մանկան սրտի զանազան արտայայտութիւններն ու հոգեկան դրութիւնները, որ ընթերցողն անձամբ կարծես թէ զգում է այն ամենն, ինչ որ զգում և գործում են Սպիրիի փոքրիկ հերոսները. մենք էլ մանուկների հետ կարծես պատժի երկիւղ ենք կրում, խղճի խայթոց զգում, սիրում, ատում, ուրախանում և տխրում։ Զուր չէ Սպիրին իւր գրուածքների ճակատին դրոշմում. «պատմութիւններ մանկանց և նոյնպէս նրանց համար, որոնք սիրում են մանուկներին»։

Իսկական գեղարուեստական գրուածքը պէտք է ազատ լինի տէնդէնցիայից, բայց և այնպէս պէտք է խորը և ուժեղ տպաւորութիւն թողնէ մարդուս սրտի և կամքի վրայ. այդ տեսակէտից ևս Սպիրիի գրուածքներն ազնուացնող և կրթիչ ազդեցութիւն են թողնում մեծ ու փոքր ընթերցողների վրայ։ Ամեն ինչ ճիշտ ու բնական է նրա պատմութիւնների մէջ. կարծես նկարուած են կենդանի օրինակից։ Միշտ իդէալականի և

ֆրակնի մէջտեղն է կանգնած Սպիրին և այդպիսով էլ նկարագրուած տիպերը սիրելի են և համակրելի։

Սպիրին քաջ ծանօթ է թէ մեծ քաղաքների աղմկալի կեանքին և թէ Ալպեան սարերի գիւղական պարզ ու խաղաղ կենցաղին. նա նոյն ճշտութեամբ նկարագրում է ինչպէս շքեղ պալատների փարթամութիւնն ու ճոխութիւնը, նոյնպէս և հասարակ խրճթի պարզութիւնն ու աղքատութիւնը։ Նա աւելի մեծ սիրով է ծանօթացնում ընթերցողին գիւղական կեանքի հետ՝ պատկերացնելով նրան գիւղական խեղճ որսորդի, հովուի, օտարների առաջնորդողի և երկրագործի խրճիթները. բայց նոյնպէս սիրով նկարագրում է միջակ կարողութեան և կրթութեան տէր գիւղացու, կալուածատիրոջ և քահանայի տները։ Սպիրիի ամենասիրելի նկարագրական նիւթը մատակարարում է նրան իր սիրելի հայրենիքը—Զուիցերիան, որի բոլոր անկիւնները նա անգիր գիտէ և լաւ ճանաչում է. նա այնպիսի հմտութեամբ և սակաւ խօսքերով է նկարագրում այդ սիրուն երկրի բնական գեղեցկութիւններն ու հրաշալիքները, որ մարդ կարծում է թէ անձամբ այնտեղ է գտնւում և աչքով տեսնում՝ կարդացածը. բայց միևնոյն ժամանակ նա հիանալի կերպով է նկարագրում նոյնպէս և Պարիզի, Նէապօլսի, Ֆրանկֆուրտի և այլ եւրոպական մեծ քաղաքների կեանքն ու հանգամանքները։

Մի փոքր աւելի մանրամասն դիտենք Սպիրիի մի քանի պատմութիւնները։ Սկսենք մի զուարճալի պատմութիւնից, որի վերնագիրն է. «Բիձայ Տիտուսի ամառանոցում»։ Բիձայ Տիտուսը գրքերով շրջապատուած մի գիտնական է, որ կազդուրուելու նպատակով մի ամառ անց է կացնում Զուիցերիայում. նրան ուղեկցում են իր՝ շարունակ ողբացող կինն ու որդեգիր վերցրած տղան։ Տիտուսը խաղաղ տեղ է որոնում, որպէս զի



հանգիստ պարապել կարողանայ և ոչ ոք չխանգարի իրեն. երկար հարց ու փորձից և փնտռելուց յետոյ վերջապէս խաղաղ կարծուած մի վայր է գտնում և անմիջապէս իր գործին նուիրւում։ Սակայն հէնց առաջին երեկոյեան մի «սարսափելի» տեսարանի է ներկայ լինում՝ անդորրութիւն որոնող այդ գիտնական պարոնը. ամարանոցի դիմացը կար մի մեծ տուն, որ մինչև երեկոյ շատ խաղաղ էր. «այժմ յանկարծ դիմացի հրապարակից մեծ աղմուկ լսուեց. Դօրան (որդեգիրը) վազեց դէպի պատուհանը և դուրս նայեց. հրապարակի մէջտեղը կանգնած էր մի մեծ կառք, որի երկու սև ձիերն անհամբեր տրոփում էին։ Տանից վազելով դուրս թռան՝ մէկ-երկու-երեք, դեռ էլի, հինգ-վեց տղայ ու աղջիկ և «ես, ես, ես կնստեմ կառապանի կողքին», աղաղակում էին այս ու այն կողմից և հետզհետէ աւելի բարձր աղմկում. երեխանց մէջն ընկաւ մի շուն և մէկ դէպի սրան, մէկ դէպի նրան վազելով սկսեց հաջել. մի այնպիսի աղաղակ բարձրացաւ, որ վաղուց արդէն չէին լսել Նինէտ մօրաքրոջ ականջները. «ի սէր Աստուծոյ, ի՞նչ խաբար է, ո՞րտեղ ենք ընկել մենք», աղաղակեց նա սարսափահար։ Այս պատմութեան մէջ պայծառ գոյներով նկարագրուած են մի շարք մանուկների բնաւորութիւններն ու գործողութիւնները. Իւլիան, անդրանիկը, արձակուրդին տուն եկած I. դաս. աշակերտ է, որ շարունակ բարկացնում է դայեակին և իրենից փոքրերին չարչարելով՝ զուարճանում է։ Պաւլան, 13 տարեկան աղջիկը սաստիկ ցանկութիւն ունի մի ընկերուհի ունենալու. նրանից փոքրն է Ռօլֆը, տան գիտնականը, որ շարունակ հանելուկներ է առաջարկում ամենքին և պահանջում, որ լուծեն։ Դրանց հետ միանում է մի սիրուն զոյգ «Վիլլին և Լիլին, մօտ 8 տարեկան երկուորեակները»։ Այդ կէս դիւժինի մէջ ա-

մենից փոքրն է Հնգամեայ Հուննէն. այս փոքրիկ ընկերութեան միատեղ ապրելն ու գործելը վերին աստիճանի բնական և սիրուն կերպով է նկարագրուած. ամէնքն էլ հանելուկներով են զբաղուած. «մենք կարող էինք մի պաշտօնեայ էլ վարձել, որ ուրիշ ոչինչ չ'անէր բացի հանելուկներ լուծելուց», ասում է հայրը։ Նոյն իսկ երեխաների դասերը մնում են առանց պատրաստելու՝ այդ հանելուկների պատճառով. խեղճ դայեակը մեծ աշխատանք ու գլխացաւանք ունի երեխաներին և նմ մանաւանդ երկուորեակներին նայելու։ Մի անգամ նրանք հրդեհի պատճառ են լինում. լուացարանում ուզում են նաւերով ճանապարհորդել, վերցնում են Րօլֆի նետ ու աղեղը, նետաձգութեամբ պարապում և վիրաւորում իրենց դրացի գիտնական պարոնի որդեգրած փոքրիկ աղջկան։ Այս վերջին դէպքն առիթ է տալիս, որ այդ երեխան մօտենայ աղմկալի ընկերութեանը. բիձայ Տիտուսը նոյնպէս, որ արդէն ուզում էր այդ տանից տեղափոխուել, մի խաղաղ ու հանգիստ անկիւն է գտնում դրացու այգու ծածուկ վայրում, իսկ շարունակ ողբացող Նինէտ մօրաքոյրն ընտելանում է մանուկներին։

Այս պատմութեան ամբողջ ընթացքում գործող անձինքը՝ մանուկներն են. մեծերն երևում են միայն իբրև անհրաժեշտ վերահսկողներ և ոչ թէ բարոյական խրատներով ծանրաբեռնուած առաջնորդներ։ Այս հանգամանքը յատուկ է Սպիրիի բոլոր գրուածքներին. հեղինակն աւելի մեծ սիրով է նկարագրում փոքրիկների ինքնուրոյն գործողութիւնները, թէև դրանք մեծ մասամբ, ինչպէս որ յատուկ և բնական է մանկական հասակին, կատակներ և անմեղ արարքներ են։ Սպիրիի փոքրիկների մէջ մենք չենք տեսնում մեծերին յատուկ



զգացմունքներ, որ ուրիշ մանկական գրուածքների մէջ շատ յաճախ են պատահում։

Սպիրին ուղիղ ճանապարհով է գնում. նա մանուկներին նկատում է ոչ իբրև փոքրիկ տիկիններ, այլ ինքնուրոյն և իրենց յատուկ բնական օրէնքներով ապրող արարածներ։

Զարմանալի զանազանակերպ և միմեանցից տարբեր մանկական բնաւորութիւններ է նկարագրել Սպիրիի գրիչը. բարեկամութիւն որոնող Պաուլայի հետ նկարագրուած են՝ երևակայութեամբ հարուստ Էմմին, հետաքրքրուող Սալլին և գործնական Էլզան՝ իբրև հասակակից բարեկամներ։ Հանելուկներ լուծող Րօլֆի հետ աչքի են ընկնում փոքրիկ բնագէտ Ֆրէդին, որի գրպանները լի են սարդերով և ամեն տեսակ ճիճուներով, և ծոյլ, վայրենի և կամակոր Լէքսը։ Այդ պատմութիւնների մէջ պատահում ենք նոյնպէս երգեցիկ խմբեր և մարմնամարզական ընկերութիւններ կազմող երեխաների, փոքրիկ արիստոկրատների, փողասէրների և հանճարեղ ու թեթևամիտ արուեստագէտների։ Նկարագրուած են նոյնպէս զարմանալու չափ մեծ քանակութեամբ փոքրիկ միջադէպքեր, որոնք առաջ են բերուած հումորով և մանկական բնաւորութիւններին հրաշալի կենդանութիւն, աշխուժութիւն և հետաքրքրութիւն են տալիս։

«Րօնէթայ» և «Անցած-չմոռացած» գրուածքների մէջ երևում է Սպիրիի՝ պատմելու և հոգեկան դրութիւններն ճշտութեամբ արտայայտելու տաղանդը. նա լարուած է պահում մեր ուշադրութիւնը ոչ թէ տարօրինակ իրողութիւններով, այլ հոգեկան ընդհարումներով։ Առաջին գրուածքի մէջ Րօնէթայ ամարանոցում մի ազնիւ և փափկասիրտ տիկին պատահմամբ ծանօթանում է գեղեցկութեամբ աչք շլացնող, բայց գաղտ-

նի հոգեկան վշտով ճնշուած և լռակեաց մի երիտասարդ աղջկայ հետ։ Հետզհետէ տիկնոջն յաջողւում է իւր պարզասրտութեամբ և ցաւակցութեամբ գրաւել օրիորդի սիրտը և հաւատարմութիւնը։ Դրանք բարեկամանում են և աղջիկը յայտնում է իւր սրտի գաղտնիքները. նա խոստովանում է, որ ինքը նախանձից դրդուած՝ աշխատել է իւր հարազատ քրոջը դժբաղդացնելու և միևնոյն ժամանակ մերժել է՝ մտաւոր կեանքով ապրող մի երիտասարդի առաջարկութիւնը։ Իւր գաղտնիքը յայտնելով ընկերուհուն, օրիորդը նորից յոյսերով լցւում է և յանկարծ լուր ստանում, որ քոյրն ազատ է մնացել դժբաղդութիւնից։ Ազատուելով ծանր հոգեկան տանջանքներից և խղճի խայթոցից՝—իւր քրոջն երջանիկ տեսնելով—ինքն էլ երջանկանում է այն մարդու հետ, որին առաջ մերժել էր և որին չէր ցանկացել իւր քրոջ համար։ Թէև այս զուտ հոգեբանական դրութիւնները Սպիրին կարողացել է վերին աստիճանի հմտութեամբ նկարագրել, բայց և այնպէս նրա տաղանդն այս նորավէպի մէջ այնքան զարգացած չէ երեւում, ինչպէս որ մենք տեսնում ենք նրան մանկական գրուածքների մէջ։

«Անցած-չմոռացած»-ի մէջ մի գեղեցիկ, երիտասարդ, ընդունակ և շնորհքով աղջիկ իւր մէջ զգալով գեղարուեստի կայծը, բոլոր կապերը խզելով և բոլոր արգելքներին յաղթելով՝ կարճ ժամանակի ընթացքում մեծ հռչակ է ստանում և փառքի գագաթնակէտին հասնում՝ իբրև օպերգակ դերասանուհի։ Այդ միջոցին սիրահարւում է իւր արհեստակից մի երիտասարդի վրայ, բայց անհիմն կերպով կասկածելով իւր սիրեցեալի հաւատարմութեան վրայ՝ ծանր հիւանդանում է և հազիւ առողջանալով՝ փախչում է, իւր սիրած արուեստից ձեռք վերցնում և ապրում է առանձնացած։ Նրա սիրելին



շարունակում է իւր արուեստով զբաղուել՝ յուսալով թէ կարող կլինի լուծել այդ դժբաղդ թիւրիմացութեան խնդիրը, բայց անբաղդ օրիորդի մահուամբ այդ յոյսն էլ ի դերև ելնելով, նոյնպէս առանձնանում է, ապրում է յիշողութիւններով և բարեգործութիւն անելով՝ բայց վերջը նա էլ ընկճւում է և մեռնում հայրենիքից հեռու—օտարութեան մէջ։

Վերոյիշեալ երկու նորավէպերի մէջ ևս թէև հիմնական գաղափարներն ու գործող անձինք հետաքրքրական և կենդանի կերպով են դուրս բերուած, բայց և այնպէս ամեն մի փոքրիկ բանի վրայ ուշադրութիւն դարձնելը, գործողութեան ընթացքի համար աննշան մանրամասնութիւնները, որ մանկական գրուածքներին մի առանձին գրաւիչ կերպարանք են տալիս, վնասում են հոգեբանական խնդիրների վերլուծմանը և մեր ուշադրութիւնը թուլացնում՝ գլխաւոր գործող անձանց վերաբերմամբ։ Ռօնէթալը կարդալիս կարծես մի փոքր յոգնում ենք, մինչև որ հասնում ենք պատմութեան իսկական խնդրին և ցանկանում, որ այն սիրուն մանկական միջադէպքերը, որով զբաղեցնում է մեզ գիրքը, կապակցուած չլինին սիրոյ պատմութեան հետ։ Այդ միջադէպքերից մէկն օրինակ նկարագրում է երկու մանուկների ձեռայ ծանօթանալը. այդ մանկական կեանքի մի տեսարանի այնպիսի հրաշալի նկարագրութիւն է, որ դժուար թէ մի ուրիշ տեղ կարելի լինի կարդալ։ Երեխաները լսել են, որ սառը ջրով էլ բժշկւում են հիւանդներին և ահա նրանք փորձում են սառը ջուր ածելով մի հիւանդ թռչնակի վրայ՝ բժշկել նրան. բռնում են սառն աղբիւրի ծորակի տակ և խեղճ թռչունը սատկում է նրանց ձեռքին։ Խորը վշտով համակուած՝ նրանք պատրաստութիւններ են տեսնում նրան թաղելու. մի սիրուն արկղիկ դագաղի տեղ է ծառայում.

մարմինը փաթաթում են մամուռի և ծաղիկների մէջ և երգում են իրենց միտն ընկած երգը. «արշալոյս, արշալոյս, լուսաւորում ես իմ կանխահաս մահը...»: Յետոյ նրանց զբաղեցնում է այն միտքը՝ թէ արդեօք թռչնակն էլ մահից յետոյ երկինք կերթա՞յ. «միայն այն դէպքում, եթէ իւր պարտքը կատարել է, հակառակ դիպուածում - ո՛չ, ասում է պատանին. բայց երկուսն էլ որոշ չգիտենալով այդ, աղջիկը գրում է մի տոմսակի վրայ. «Սիրելի Աստուած, ողորմած եղիր թռչնակին և տար նրան երկինք». այդ տոմսակը թռչնակի հետ միասին թաղում են գերեզմանում: «Վրան էլ ծաղիկներ ցանենք, շարունակում է աղջիկը, և երբ մէկ էլ այստեղ գաս, գերեզմանը պարտէզի նման կլինի». «ես էլ քարեայ արձան շինել կտամ, ասում է տղան, և հէնց ծաղիկների մէջտեղը դնել կտամ»: Այս մանուկները բաժանւում են միմեանցից: Որքան որ սրանց այս առաջին ծանօթութիւնն այսպիսի գեղարուեստական ճշմարտութեամբ է նկարագրուած, այնքան և զգալի է լինում նրանց տասնեակ տարիներից յետոյ միմեանց նորից պատահելու շինծուութիւնը և գործողութեան ընթացքի հետ ունեցած կապակցութեան թուլութիւնը. այս կտորն ինչպէս մի սիրուն հատուած՝ բոլորովին կապ չունի իսկական պատմութեան հետ:

Գործողութեան կենդրոնացման այս թերութիւնը, որ նկատւում է Սպիրիի այդ երկու նորավէպերի մէջ, բոլորովին տեղի չունի նրա մանկական գրուածքների մէջ. այս ասպարէզում նա հանդիսանում է իբրև իսկական բանաստեղծ և իշխում է կատարելապէս թէ նիւթի և թէ ձևի վրայ:

Սպիրիի մանկական պատմութիւններից ամենամեծն ու ամենայայտնին «Հայդի» անունն է կրում. այդ գրուածքի մէջ պարզ և համոզեցուցիչ կերպով արծարծուած է այն հիմնական գաղափարը, որ մանկական սրտի մաքրութիւնն ու անմեղութիւնն ընկճող զօրութիւններ են: «Հայդի»ի մէջ նկարագրուած են երկու «ալմհիւտ» Գրաուբիւնդէնում և մի պատրիկի տուն Ֆրանկֆուրտ քաղաքում:



Ալպեան սարերի ամենաբարձր գագաթներից մէկի վրայ եղող ալմհիւտի մէջ ապրում է եօթանասուն տարեկան, աշխարհից կտրուած և մարդկանցից դառնացած պապը. Նրա մօտ են բերում նրա հնգամեայ թոռանը, Հայդիին, որովհետև Դիտէն, մօրաքոյրը, որի մօտ ապրել էր նա մինչև այդ ժամանակ, չէ կամենում ձեռքից բաց թողնել Ֆրանկֆուրտ քաղաքում գտած մի ձեռնտու պաշտօն և այդ պատճառով էլ չէ ուզում երեխային իւր մօտ պահել: Երկու ամառ ու ձմեռ Հայդին մնում է սարի գագաթին, հեռու մարդաբնակ տեղերից. մի փոքր ցած գտնուող երկրորդ ալմհիւտի բնակիչներն են նրա միակ դրացիները. այդտեղ ապրում է «Այծպետէրսի» ընտանիքը: Տասնումէկ տարեկան Պետէրսը կարդալ չգիտէ և միայն այծեր է արածացնում. իսկ նրա մայրն ու կոյր տատը տնային գործով են պարապում: կոյրը միմիայն թել է մանում: Գիւղը և դըպրոցը վերին ալմհիւտից երկու ժամուայ ճանապարհ հեռու են գտնւում, այդ պատճառով էլ պապն իրաւունք չէ տալիս Հայդիին դպրոց յաճախելու. Նա առանց այդ էլ մարդկանց միասին ու միատեղ լինելը չարիք է համարում: Սպիրին հրաշալի արուեստով է նկարագրել այդ երեխայի հոգեկան զարգացման ընթացքը՝ զօրեղ բնութեան տպաւորութիւնների ազդեցութեան ներքոյ: «Այծպետէրսին» Հայդիի հակապատկերն է իւր անարուեստ կոպտութեամբ, այն ինչ քնքոյշ և բնութեան զաւակ Հայդին առանց մի որևէ կրթութեան ինքն իրեն աճում և զարգանում է լաւ, ինչպէս ինքը բնութիւնը: Երբ

Հայդին ութ տարեկան է դառնում, մօրաքոյր Դիտէն յաջողեցնում է նրան Ֆրանկֆուրտ տանել. պապը, որի վրայ ազդել էր Հայդին իւր մանկական սրտով՝ բարկանում է, բայց ստիպուած է լինում բաժանուել իւր սիրած երեխայից և այնուհետև աւելի մարդատեաց է դառնում։

Հայդին կանաչ ալպից, արևի դրացիութիւնից հեռանալով՝ ընկնում է քաղաքի անլոյս և անտերև բակերից մէկի մի սենեակը. Այծպետէրսի ընկերակցութիւնից զրկուելով՝ ստիպուած է զբաղեցնել տասերկու տարեկան մի հիւանդ երեխայի։ Հայդիին հրաւիրելու համար հետևեալ պահանջն էին արել մօրաքրոջից. «գտնել մի զուիցերացի աղջիկ, որ ծնուած ու սնուած լինելով լեռնային մաքուր օդի մէջ, առանց—եթէ կարելի է ասել—ոտքը գետնին դիպցրած լինելու և կեանքի մէջ մտնելու, ուղղակի մեզ մօտ գայ»։ Ահա այդ պահանջի հիման վրայ բնութեան հարազատ զաւակ Հայդին գալիս է քաղաք. առաջանում են զարմանալի և զուարճալի տեսարաններ, բայց շուտով դրանք փոխւում են ողբերգականի, որովհետև երեխան առանց մի որևէ նախապատրաստութեան բնութեան ծոցից կորզւում և քաղաքակրթութեան ծոցն է նետւում։ Քաղաքակրթութեան և բնութեան շփման տեսարանները նկարագրուած են վերին աստիճանի զուարճալի կերպով. այդ երկուութեան մէջ երեխան հիւանդանում է։

Ո՜րքան յաճախ Հայդին վերևից դէպի հովիտն էր նայել և արևի ճառագայթներով զուարճացել, իսկ այժմ խեղճը տարիներով ո՛չ սիրուն գոյնզգոյն արօտն է տեսնում և ոչ էլ պապի հետ դէպի ներքևի ալպը սահում՝ կոյր տատին տեսնելու։ Հայդին հալւում է հայրենեաց կարօտով և վերջը գիշերները, քնած միջոցին մանգալու հիւանդութիւն ստանալով՝ կատարեալ կմախք է դառ-

1005
21636



նում։ Բարեբաղդաբար տանտէրն ու տանու բժիշկը հասկանում են բանի էութիւնը և վճռում, որ Հայդին պէտք է շուտով վերադառնայ իւր պապի ալպը։ Նա իւր բնական անմեղութիւնն էլ անվտանգ հետն է բերում՝ աւելացնելով դրա վրայ և մի գանձ, որի ձեռք բերելուն օգ՚նել էր Ֆրանկֆուրտում մի ազնիւ կին. այդ գանձն է՝ մանկական հաւատ առ Աստուած. այդ հաւատով նա կարողանում է այնպիսի ազդեցութիւն ունենալ աշխարհի թշնամի պապի վրայ, որ նա նորից հաշտւում է Աստուծոյ և մարդկանց հետ և կիրակնօրեայ հագուստով, Հայդիի ձեռքը բռնած, իջնում է սարից, գնում է գիւղի եկեղեցին և քահանային խօսք տալիս, որ ձմեռը գիւղում կբնակուի։

Հայդիի վերադարձը և պապի ու կոյր տատի հետ ունեցած տեսակցութեան նկարագիրը խորը տպաւորութիւն են թողնում ընթերցողի վրայ։ Սակայն պատմութեան այդպիսի վերջաւորութիւնը չէ գոհացրել շատ պատանիների և նրանք խմբովին դիմել են հեղինակին՝ հարցնելով՝ թէ Հայդին ի՞նչ է եղել յետոյ։ Սիրալիր Սպիրին նրանց հարցմանը պատասխանել է՝ այդ պատմութեան երկրորդ մասը գրելով։

Հայդիի երկրորդ մասում արծարծուած է այն հիմնական գաղափարը, այն հին ճշմարտութիւնը, որ հարուստ և աղքատ, իշխան և գեղջուկ իրար հակասող գաղափարներ չեն, այլ դիւրութեամբ կարող են հաշտուել իրար հետ. Սպիրին հարուստ մեծ մօր բերանով ասում է աղքատ տատին. «մեր երկնային Տիրոջ առաջը ամենքս էլ հաւասար կերպով թշուառ ենք. ամենքիս համար էլ կարևոր է, որ Նա չմոռանայ մեզ»։

Հայդիի պատմութեան ընթացքը լաւ ապացոյց է, թէ Սպիրին ինչպէս բնական և անմեղ կերպով է կապակցում կրօնական մոմէնտը պատմութեան հետ. կար-

դալու միջոցին մարդ չէ զգում, որ կրօնական զգացմունքներն արհեստական կերպով, ուժով են առաջանում, այլ ընդհակառակը բնական է համարում։

Սպիրիի գլխաւոր խնդիրն է մանկական հոգու զարգացումն ամենայն կողմից. նա այդ հոգեկան զարգացումը կարևոր դէպքում կապակցում է ժողովրդի մէջ խորն արմատացած հաւատի հետ։ Հայդին կարդալու առաջին փորձութիւնները, տատի անկողնու մօտ, աղօթագիրք կարդալով է անում. որքան բնական ու պարզ, նոյնքան ևս ազդեցիկ է այդ տեսարանը։

Հայդիից յետոյ առանձնապէս ուշադրութեան արժանի է Սպիրիի «Հայրենազուրկը», որ ամբողջովին արտայայտում է հեղինակի բանաստեղծական ձիրքը։ Այս աշխատութիւնն առաջինն էր, որ լոյս տեսաւ Եօհաննա Սպիրիի իսկական անունով. թէ այդ գրքի առաջին երկու հրատարակութիւնները և թէ հեղինակի ուրիշ աշխատութիւնները մինչև այդ ժամանակ տպագրւում էին անանուն։

«Հայրենազուրկ»-ի համառօտ բովանդակութիւնը հետևեալն է. Պեշիերա քաղաքից մի իտալացի ամուսնանում է Զուիցերիայի Օբէրէնգադինի Զիլս գիւղում և հայրենիք վերադառնում։ Մի քանի տարի երջանիկ ամուսնական կեանք վարելուց յետոյ զուիցերացի կինը վախճանւում է՝ մի երեխայ թողնելով։ Հայրն իւր ունեցած կալուածքը, տունն ու տեղը յանձնելով իւր մի բարեկամին՝ երեխայի հետ գաղթում է իւր հանգուցեալ ամուսնու հայրենիքը և աշխատանք որոնում. սակայն մի օր իտալացուն դժբաղդութիւն է պատահում. ծանր խեղումներ է ստանում նա աշխատանքի միջոցին և տուն տարուելով՝ անօգնական մեռնում է՝ թողնելով փոքրիկ Րիկօին բոլորովին մենակ։ Րիկօն մեծանում է անտէր ու անօգնական. Նրա մխիթարութիւնը միմիայն



իրենց դրացու փոքրիկ Մանիկն էր, որի հետ նա խաղում է ցերեկները, ուսումնարանից վերադառնալուց յետոյ։ Գիւղի բարեսիրտ ու ծեր ուսուցիչը յայտնագործում է Րիկօի արտասովոր երաժշտական ընդունակութիւնը և ընծայում նրան իւր ջութակը։ Մանկական յիշողութիւնները և հայրենեաց կարօտը քաշում են նրան դէպի Գարդա լիճը. ջութակը վերցնելով՝ գիշերով դուրս է գալիս նա Զիլսից և ուղևորւում դէպի Մալոյեա սարը, ուր յաճախ եղել էր հօր հետ միասին. նա կարծում է՝ թէ Գարդա լիճն ուղղակի սարի տակն է գտնւում. ընթերցողը մտքով հետևում է թափառող երեխային և վախենում՝ թէ արդեօք ինչ կպատահի խեղճին. սակայն Սպիրիի հմուտ և ճարտար ձեռքը շուտով միջոցներ է գտնում նրան օգնելու՝ առանց հրաշքի և արտասովոր հանգամանքների. Մալոյեա սարի պանդոկի առաջը կանգնած է պոստային կառքը, որ պէտք է դէպի Բէրգամօն գնայ. փոքրիկ երաժիշտը գրաւում է կառապանի ուշադրութիւնը և նա համաձայնում է Րիկօին անվարձ հետը վերցնել։ Րիկօն ճանապարհին ջութակի վրայ նուագելով՝ գրաւում է կառքի մէջ նստողների համակրանքը և նրանց օգնութեամբ հասնում է իւր հայրենիքը, Գուրդա լճի մօտ։ Պեշիէրայում Րիկօն մտնում է կալուածատէր մի այրի կնոջ տուն և ջութակի նուագով զբաղեցնում այդ կնոջ հիւանդ երեխային։ Հանգամանքների շնորհիւ հետզհետէ պարզւում է, որ այդ տիկնոջ կալուածքը Րիկօի հօր սեպհականութիւնն է. այսպիսի բաղդի արժանանալով Րիկօն չէ մոռանում իւր մանկական սիրելի ընկեր Մանիկին և նրան էլ բերելով Պեշիէրա՝ տարիներ անցնելուց յետոյ ամուսնանում է հետը։

Ինչպէս ընթերցողը տեսնում է, գրքի նիւթը շատ

պարզ ու անմեղ է. բայց գլխաւորն այն է, որ կարդալու ժամանակ մարդ ինքն էլ կարծես սիրում է, ցաւ է քաշում, գրաււում է այդ փոքրիկ հերոսներով, լարուած ուշադրութեամբ հետևում է և գիրքը մի կողմը չի դնում մինչև վերջացնելը։

Սպիրիի ոյժն ու զօրութիւնն երևում է երկու բանում. մէկ՝ որ ընթերցողը միանգամից, առանց երկար ու բարակ առաջաբանների, ընկնում է մանուկների շրջանը, ուրախանում և վշտանում նրանց հետ միասին. դրանց անարուեստ երկիւղածութիւնն ազդում է մարդուս սրտի վրայ։ Երկրորդ՝ Սպիրին կարողանում է իդէալականն ու իրականը շատ սիրուն և համերաշխ կերպով կապակցել. Նրա գրուածքներից գարնանային, թարմ բուրմունք ես զգում։

Արտասուք և ուրախութիւն, ցաւակցութիւն և գթաշարժութիւն. ահա այն զգացմունքները, որ առաջանում են Սպիրիի գրուածքները կարդացող ամեն մի մանուկի ու պատանեակի սրտում։

Սպիրիի միւս բազմաթիւ փոքրիկ պատմութիւններն էլ, ինչպէս օրինակ «Վարդ Ռէսլին» [1], «Այծարած Մօնին» [2], «Ալպեան հովիւը» [3] և այլն, բոլորն էլ սրտայոյզ և հաճելի կերպով ցոյց են տալիս մանկական անմեղութեան անդիմադրելի հրապոյրն ու թովչութիւնը։

Բաւական ենք համարում այսքանը Սպիրիի գրուածքների մասին՝ եզրակացնելով, որ այդ տաղանդաւոր

---

[1] Ե. Սպիրի, Վարդ Ռէսլին. գերմ. թարգ. Իս. Յարութիւնեանց, 1891 թ.

[2] Ե. Սպիրի. Այծարած Մօնի. գերմ. թարգ. Իս. Յարութիւնեանց, 1895 թ.

[3] Ե. Սպիրի. Ալպեան հովիւ. գերմ. թարգ. Իս. Յարութիւնեանց, 1895 թ.



կին գրողի բարոյագիտական և արուեստագիտական առաւելութիւնները նրան ամենանշանաւոր տեղն են տալիս մանկական և պատանեկական պատմութիւններ գրողների շարքում և նրա հեղինակութիւնները դարձնում մի գանձ՝ ոչ միայն մանուկների, այլ և նրանց համար, որոնք սիրում են մանուկներին։

Մեր այս փոքրիկ գրութեան նպատակն էր՝ տաղանդաւոր Սպիրիի աշխատութիւնների վրայ հրաւիրել մեր մանկական ընթերցանութեան գրքեր թարգմանողների ու հրատարակողների ուշադրութիւնը։ Սպիրիի գրուածքներն առաւել քան յարմար են թարգմանուելու, որովհետև բացի մեր թուած արժանաւորութիւններն ունենալուց, դրանք առանձնապէս նպատակայարմար և մատչելի են հայ մանուկներին՝ իրենց մէջ արծարծուած գաղափարներով և շատ անգամ էլ հայկական նահապետական կեանքը յիշեցնող նկարագրութիւններով։

Թէև վերջին տարիներս համեմատաբար բաւականին մանկական գրքեր են հրատարակւում հայերէն, բայց դրանցից շատերը միայն «մանկական» անունն են կրում. մանկական ոչինչ չկայ դրանց մէջ և անյայտ ու աննշան գրողների երկեր լինելով՝ ոչինչ հոգեկան սնունդ չեն մատակարարում ընթերցանութեան կարօտ հայ մանուկներին։ Մանկական ինքնուրոյն հայ գրականութեան մասին խօսք չի կարող լինել—այնքան սակաւ է այդպիսի գրքերի թիւը—բայց առհասարակ հայերէն զուտ մանկական ու պատանեկական ընթերցանութեան գրուածքներ էլ քիչ ունինք. եթէ այդ քիչն էլ անճաշակ ու հայ երեխաների համար դժուարամարս հատորներից լինի բաղկացած՝ ինքներս նպաստած կլինենք, որ հայ մանուկը—ոչինչ զուարճութիւն չզգալով հայերէն ընթերցանութեամբ,—կամայ-ակամայ դիմէ օտար

լեզուներով գրուած գրքերի օգնութեանը։

Որչափ որ այս—թէև մեր հանգամանքներն ի նկատի ունենալով՝ ոչ անբնական, բայց և այնպէս անմխիթար—երևոյթը տհաճութիւն է պատճառում մեզ, այնչափ ևս ուրախանում ենք՝ տեսնելով հայ մանկական գրականութեան ասպարիզում մի նոր գործօնի յայտնուիլը. այդ նոր գործօնը—հայ օրիորդը, հայ կինն է։ Այս երևոյթը, որ տասնեակ տարիներ առաջ եզակի էր համարւում, այժմ հետզհետէ ընդհանրանում և աւելի լուրջ, խոհեմ ընթացք է ստանում։ Հայ կինը մտածում է հայ մանկան մասին. մի՞թէ բնական ու համակրելի գաղափար չէ այս։ Հայ վարժուհին չբաւականանալով, որ օրուայ կէսը նուիրում է մանուկների հոգևոր և մտաւոր զարգացմանը—դպրոցում կամ տանը—աշխատում է նաև, որ իրեն սիրելի դարձած այդ փոքրիկները զուարճալի ընթերցանութեամբ ևս մտաւոր սնունդ ստանան։ Մինչև այժմ մենք սովոր էինք հայ ուսուցչին համարել դպրոցն ու գրականութիւնը միացնող միակ գործօնը, այժմ այդ ասպարիզումն էլ ուսուցչին օգնութեան է հասնում նրա լծակիցը—հայ վարժուհին՝ զգացմունքներով և բարի ցանկութիւններով լցուած։ Մեր գրագէտներից ոմանք մի փոքր խէթ աչքով են նայում այս նոր հոսանքին և բանի տեղ չդնելով նրանց գեղեցիկ ձգտումներն և հայ մանկան օգտակար գրքոյկների ընթերցանութեամբ զուարճութիւն պատճառելու բարի ցանկութիւնը, «գրականութիւն և լեզու փչացնողներ» են անուանում դրանց. ինչո՞ւ, որովհետև գրականական ասպարէզ են մտնում իրենց թարգմանութիւններով՝ առանց օրինաւոր հայերէն իմանալու։

Մենք դժբաղդաբար չենք կարող հերքել այդ հանգամանքը, բայց այնուամենայնիւ համաձայն չենք այդ



կարծիքի հետ։ Չէ՞ որ դրանք առաջին փորձերն են. չէ՞ որ սովորաբար առաջին փորձերը թերութիւններ են ունենում, որոնք ժամանակի ընթացքում ուղղւում են։ Մեր համոզմամբ, ընդհակառակը, պէտք է խրախուսել հայ կնոջն, հայ օրիորդին այդ ուղղութեամբ գործելու. դրանց գործունէութեան ամենաբնական և ամենից համակրելի կողմերից մէկն է այդ։ Թող մի-մի անգամ էլ անբովանդակ գրքոյկներ լոյս տեսնեն, թող հայ կինն իւր առաջին գրական փորձը—թարգմանութիւնը—տպագրելուց առաջ սրբագրել տայ աւելի ձեռնհասին, այդ նշանակութիւն չունի. պարոններ, դուք կարող էք քննադատել, թերութիւնները ցոյց տալ և նրանք սիրով կօգտուեն ձեր ցուցմունքներից։

Այսպիսով հետզհետէ նրանց գրականական ճաշակն էլ կզարգանայ և կսկսեն լրջութեամբ պարապել իրենց մայրենի լեզուով ու գրականութեամբ։

Առ այժմ թարգմանութիւններով սկսելով, գուցէ ապագայում կարող կլինեն ինքնուրոյն աշխատութիւններով հանդէս գալ և նկարագրել հայրենի օջախն ու իրենց սիրելի եղբայր-քոյրերին՝ հայ մանուկներին։ Եթէ մեր կեանքն ու հանգամանքները չեն կարող մեզ հայ Եօհաննա Սպիրիներ տալ, գոնէ օժանդակենք, որ հայ կինը մի փոքր կենդանութիւն ներշնչէ հայ մանկական գրականութեանը։

Ցանկանանք և նպաստե՛նք։

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴ...
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍ...

Հայաստանի Ազգային գրադարան
NL0432460

4882

## «ՀԱՍԿԵՐ»

Փոքրիկ հանդէսից արտատպուած գրքեր

1. Խս. Յարութիւնեան. Ստեփաննոս Պալասանեան գ. 25 կ.
2. Պօտապէնկօ. Մի կտոր հաց. թարգմ. Գ. ք. Ազանեանց գ. 10 կ.
3. Սենկևիչ. Դէպի Աթէնք. թ. Գ. ք. Ազանեանց գ. 15 կ.
4. Դաստիարակութեան գործութիւնը. թարգմ. Ս. Մանդի-նեան գ. 30 կ.
5. Բակ. Կիլիկիա գ. 15 կ.
6. Ն. Տէր-Կարապետեան. Խաչատուր Աբովեան գ. 60 կ.
7. Անժամանակ թատրոն և ընթերցանութիւնը թարգմ. Ս. Մանդինեան գ. 25 կ.
8. Խս. Յարութիւնեան. Աշակերտի յուշատետր գ. 30 կ.
9. Ստ. Աւետիքեան. Դեկամարներ գ. 40 կ.
10. Պեստալոցցի. Լինհարդ և Գերտրուդ. թարգմ. Խս. Յա-րութիւնեան գ. 1 ր. 50 կ.
11. Մելքիսեդեկ եպիս. Մուրատեան. Պետրոս Շանշեան. պատկերով. գ. 50 կ.
12. Խս. Յարութիւնեան. Զգացմունքների աշխարհ գ. 30 կ.
13. Յով. Թումանեան. Մելիք-Իւսուփ. պատմ. պօէմա գ. 20 կ.
14. Մ. Սօլյալի. Ուրացողը. թ. Խ. Յարութիւնեանց գ. 20 կ.
15. 1901. ս. էջմիածնի ԺԶ դարադարձը գ. 25 կ.
16. Եր. Շահազիզ. Միրաքի Էմին. գ. 60 կ.
17. Գ. ա. ք. Ազանեանց. Հընկից-Նորից. ա. պրակ. գ. 30 կ.
18. Կարալենկօ. Կոյր երաժիշտը. թարգմ. Մուշէ վարդապետ գ. 60 կ.
19. Չորրորդ դարու հայ եկեղեցին գ. 25 կ.
20. Երուանդ Շահազիզ. Նոր Նախիջևանի ս. Խաչ վանքը գ. 40 կ.
21. Խս. Յարութիւնեան. Իմ օրագիրը. գ. 25 կ.
22. Մեծ Ներսէս. գ. 25 կ.
23. Գ. Խաչկանց. Հայոց կրօնական բանաստեղծութիւն գ. 60 կ.
24. Խս. Յարութիւնեան. Ե. Սպիրի. Կին վիպագիր. գ. 15 կ.
25. Ն. Ազանեան (թարգմ.) Սև հացեր. գ. 5 կ.
26. Օ. Շրայներ. Մատուռի աւերակներում. թարգմ. Գիւտ ա. ք. Ազանեանց գ. 5 կ.

**ԳԻՆՆ Է 15 ԿՈՊ.**